ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի հայ գերդաստան, որը բնակվում է Մայկոպում, հրաւիրում է հայ օրիորդ—խնամող Հայերէն, Ռուսերէն և Գաղղերէն եզուներ, նոյնպէս և երաժշտութիւն, անական ուսուցչուհի՝ տեղը ընդունելու, 600 ռուբլ տարեկան ռոճիկով. ճանապարհի ծախսը առնում է գերդաստանը իւր վրա: Ցանկացողները՝ իրանց պայմաններով՝ կարող են դիմել նամակով՝ Въ Майкопъ, Куб. обл. Николаю Іосифовичу Алихановъ.

7—10

ԵՐԵՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՉՈՒՏՈՎ, բնակվում է Սալալաև, Վաղնեսենսկայա փողոցի վրա, տուն №33

2—3

ՀԱՅԵՐԷՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՖՐԱՆՍԷՐԷՆԻ ԵՒ ԻՏԱԼԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ: ԵԶԻԿԵԱՆՑ: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը:

2—5 (2)

ՖՐԱՆՍԻՈՒԶԻ քոյրեր ընդունում են ՕՐԻՕՐԴՆԵՐԻՆ մամ 9—1 ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ դասեր տալու համար: Սօլոլակի, տուն ՕՐԽԵԼՈՒ № 14:

3—3 (5)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ թէց ուղղակի թէչլեզործներից, նոյնպէս ՑՍԵՐԱՊ ՄԱԳՆԵԶԻԱ ծարաւութեան դէմ և կարբոլեան փօշի և ՀԵՂՈՒԿ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ:

10—10.

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱՑԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՈԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստած հանքային զանազան ջրեր:

40—40

Թեմական վերատեսուչ Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ յայտնում է, որ նա այժմ բնակվում է Կուկի, Սիմէօնովսկայա փողոց, տուն Սարգիս Ալէքսանդրեանի №-16:

4—4.

Մի Ագուլեցի երիտասարդ, որ վաճառականութեան մէջ եղել է, ցանկանում է տեղ ունենալ մագազինում. որից ապահովելու համար ունի երաշխաւոր անձինք, պայմանների համար դիմել «Մշակի» խմբագրատանը:

5—8

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տեսարը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազովսկի արքեպիսկոպոս, Միքայէլ Մխանսարեանց, Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետրբուրգայ Հայոց եկեղեցին, Արճարան Հայոց 'ի Կարին, Սովետ Հայ ընտանիք 'ի Վան, Վան քաղաք, Կամ Հայերէն առեւտրանին, Նուիրելոյ Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վաճառում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ:

Տֆխիսում ստանալ կարելի է պ. Զ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարևոր մի գիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց Հայոց» 3 հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ և յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից առել առնողին 10% զեղչումն կը գրուի. գնելու համար դիմել—Ալէքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տֆխիս—Կենդրոնական գրավաճառանոց:

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մեքքոն Փանեանցին:

9—10

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻՒ գործարանը պատիւ ունի թիֆլիսցիներին շնորհք յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվելիս ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետևեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՋԻ և ԲՈՒՄԲՐԻՆԴ: Շիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՑՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չէն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Ցենտրալնայա հիւանդոցի տակ, Լիխատինսկու տանը, Պօռնցովի արձանի դիմացը: 6—8 (2 շաբ.)

ՌՅՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՎ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարանց խիրուրգիական և աչքերի հ., Շաեմ բօրսկի վիներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.. Միրոշնիչենկո ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շաեյմ օրսկի վիներական և կաշու հ., Ասատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրոշնիչենկո ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաեյմ օրսկի և Ասատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Առաւեմարդոյժ Օրբեխա աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ վերջացնելու պատճառով զանազան տեսակ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ծախվում են չափազանց էժան ԳՆԵՐՈՎ Պ. ՄԻՐԶՈԵՎԻ նախկին պատկերահանդէսի մէջ, Գօրսվինսկի փողոց, տուն Շիսելվի, Վեսալի լուսանկարի կողքին: ՎԱՃԱՌՈՒՄԸ սկսվեցաւ սեպտեմբերի 4-ին և կը շարունակվի մինչև ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ը: Հոկտեմբերից պատկերահանդէսի ՍԵՆԵԿԱՆՆԵՐԻ մի մասը ՎԱՐՁՈՎ կ արվում: Միևնոյն տեղը բակում ԵՐԿԱԹ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ են ծախվում:

1—3

ԹԻՆՆԱՑԻ ԳԻՆԻ ջերմի դէմ, ԱՏԿԻՆՍՈՆ և ուրիշների ՀՈՍԱՒԷՏ ԶՊԵՐ, կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ, Արծրունու զալէրէյի վրա:

1—3

Կասաւի ԿԱՆԱՆՑ ՕՂՈՒԿՆԵՐ և ԹԵՒՆՈՑՆԵՐ, նոյնպէս ՏՂԱՄԱՐԿԵՐԵԱՆՑ և երեխաների: Մեծ քանակութեամբ ՊՈՐՏՄՈՆԵՆԵՐ փոքր և մեծ փողերի համար: ՊՈՐՏՍԻԳԱՐ, ՊՈՐՏՎԻԶԻՏ և ԹՂԹԱԿԱԼ, Գեղեցիկ ԱԼԲՈՄՆԵՐ, զանազան ՆԵՒԵՍԵՐՆԵՐ: Գլխերիրնի ՍԱՊՈՆ: Սպասում եմ օրերումս մեծ քանակութեամբ ադամարգերեանց ԳԼԽԱՐԿՆԵՐ կասաւրից: ՍՏԵՓԱՆ ՄԱՆՎԵԼՈՎԻ խանութ Գօրսվինսկի պրոսպեկտ, ՄԴԻՎԱՆՈՒ ՏՈՒՆ:

2—3

ՌՈՒՍԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները գիտեցող մի ՎԱՐԺՈՒՀԻ ԴԱՍԵՐ է փընտռում: Հասցէն. Սալգատսկի բաղար, ՊՕԼԻՑԵՍԿԱՅԱ փողոց, տուն Կուզինովի № 30, քնարան ՊԱՇԿԵՎԻՉԻ

3—5 (2)

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ, ՊԵՐՈՃՆԵՐ, ՍՈՒՐԹԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԱ ԿՈՆՅԱԿՆԵՐ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խրախճանաբար ցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ. МАГАЗИНЪ ВАРШ'ВСКАЯ ПЕКАРНЯ փոստային կոնֆիկտ պատանդողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում.

Մ. Հախնազարեանց.

7—50

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ դասագրքերը.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (առաջարայ ուսումնք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ազգային Քրիստոնական աշխարհ (բ. տարուայ ուսումնք և ընթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսումնք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.



Կ ՊԱՆՑՑԷՐ ԱՏԱՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ տուն ԶՈՒՐԱԼՈՎԻ: Եկող ձրմեռվայ սեզոնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՒՈՒԲԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՁԵՒԵՐԻ չափազանց էժան գներով, այսինքն: Ձեռքի մեքենաներ 12—.5 ռուբլ: Ոտքի 50—80 ռուբլ:



4

Дозволено цензурою Тифлисъ, 12 Сентября 1880 г. Տպարան եղբայր Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ